Եւ կըլլէլ չուզելուն համար՝ բերանը բաց ձըգելով՝ բերնին ջուրը մէկ խարէր դուրս կը վազէ , և հիւանդը՝ կամ կը խըլխտըլիմ տէյի վախնալով կամ հազալուն պատճառովը՝ ասլա չի կըրնար րահաթ գըռնել ․ տայմա տուրմայըպ կը հոգնի ։

Պօղազի խուֆիւնէթի չէօգին ձեւը ։

* ․ 125 ․ Բանի՛ որ հիւանման շատնայ նէ՝ ցաւը կը շատնայ , և քէսկին տաքութիւն կիմանայ հիւանդը ․ երեսը կը կարմըրի՝ կամ մօռարմիշ կըլլայ , և կուռենայ ․ աչվըները իրենց տեղէն դուրս կէլնան՝ և կը փայլին ․ գըլուխը կը ցաւի , հիւանդը չալխանթըլլի մէջ կիյնայ , քունը չի տանիր , սայըխ-

լամիշ կըլնէ, չըլտըրըմիշ կըլնէ. և խենթութիւնը պանղի գաղտուկ՝ և շատ անգամ ալ պէլլի կըլլայ.

Փորը խառըղ, ծարաւութիւնը շատ. և թէ որ պօղազին ուռեցքը խըռթլախին ալ անցնի, սըրտ սըրտ պայըղընութիւն կու գայ, և շունչ առնելու շատ դժուարութեն կը քաշէ: Պանղի անգամ ուռեցքը դըրսէն ալ կերևի քի՝ թէ որ ներսէն դուրս զարկած առենը՝ իլլէթը թեթևնայ նէ՝ աղէկ նշան է. զէրէ իլլէթին նիւթը այն աղնիւ տեղերէն տէֆ ըլլալով զարարսըզ տեղ եկած կըլլայ.

Ամմա թէ որ դըրսէն ուռեցքը շատնալով՝ իլլէթը առջա ծանըրնայ նէ՝ իլլէթը նոյն տեղերը պիւթիւն պիւթիւնէ զապթ ընել կը ցըցընէ, և թէհլիքէլի նշան է.

Հիւմմաններուն Փարխը:

*. 126. Այս ամէն վէրը գրուած ծինս չինանքէներուն հետը՝ ամէն թիւրլիւ հիւմմայ ալ կըլնայ ըլլալ. իւֆիւնէթլի, սաֆրալի, սինիրլի, և չարանշանի. Թէ որ չինանքէին հետ եղող հիւմման սինիրլի հիւմմայ է նէ՝ չինանքէին կըսուի չարանշան, ուլչէռօղա, եէնռծէլի. և շատ թէհլիքէլի է:

Ամմա չիւնքի այս ծինս չինանքէին հետ սէպէ թէ՝ տայիմա պաշխա իլլէթ մը կըլլայ. և էքսէրի պքառլաթթինա ըսուածը, անոր համար այս չինանքէն միշտ լիքինձի և սինթօմաթիքօ հիւանդութիւն կը սէպէնք. և ասոր վրայ պքառլաթթինա հիւանդութեան համար խօսած տեղերնիս երկանկէկ կը խօսինք: Այս տեղըս սալթ այսքանը իշարէթ ընենք քի՝ չէ թէ սալթ չինանքէ տէլլէ ֆանւչի՝ կամ սինանքէ ըսուածը, այլ և թռաքէխթիմէ ըսուածն ալ հետերնին եէնռծէյի պէս եարա մը կունենան. և ասոնց ամէնուն սէպէպը մէկ ըլլալուն համար՝ դեղերնին ալ փարղէ քի՝ մէկ թարզ ըլլայ:

### Անոր պատճառները։

*․ 127․ Զինանքէին իրեն Թարգին կեօրէ՝ և պաշլըճա կամ իքինճի հիւանդութիւն ըլլալուն կեօրէ՝ պատճառները ալ Թարգ Թարգ կըլլան․ և անկէց կըլլայ հետը զուհր ըրած հիւմմային ինչ ճինս ըլլալն ալ։ Պաշխա ամէն անդամքներուն իւֆիւնէթին պատճառը ինչ է նէ՝ պօղազին իւֆիւնէթին պատճառն ալ կերևի թէ անկէց ֆարխը չէ։

Շատ անգամ պզտի երկրին հալան մէկ չի ճանչցըվելու Թարգով մը աւըրուած ըլլալով հիւանդութիւնն ալ էբիտէմիքօ է․ լաքին շատ անգամ ալ սրօռատիքօ է։ Այս իւֆիւնէթին առէթ եղած պատճառներուն մէջ պաշլըճայ տէյի կը դըրվի պաղանելը․ անոր համար է քի՝ այս հիւանդուէ շատ գըտնըվելը մէկ մը գարնան՝ և մէկ մը նալ աշնան ամիսնե-րը կըլլայ։ Ձմեռը զուհր ըրած և ռէւմաթիզմօի Թապիյէթ ունեցող բէռխընեւմօնիայէն ալ այս հիւանդութիւն պատճառելը տեսնըված է․ որ կուրծքին զարին իւֆիւնէթին ուժը կոտրելով իւֆիւնէթը վեր տեղերը ելաւ բըռնեց․ և անկէց չինանքէ զուհր ըրաւ։ Իւ ֆարաղա գարնան և աշնան ամիսները շատ կըլլայ ըսինք․ լաքին տարիին պաշխա էյամներուն և պաշխա ամիսներուն մէջն ալ այս հիւանդութենս զուհուրաթը պակաս չէ։

### Անոնց դեղերը։

*․ 128․ Զինանքէն ըժշկելուն Թարզն ալ մէկ ալ իւֆիւնէթներուն պէս է․ և ալքաթ ընել պէտք է հիւանդութեանը պատճառին, հիւանդին խառնըվածքին, այն տարվան և այն տեղին հավային բերմունքին, հետը գըտնըված հիւմմային որ ճինս ըլլալուն․ և հիւանդութեն երկան կամ կարճ առեն քըշվելուն։ Ո՛րքան որ ձեռքերնուս կու գայ նէ՝ պէտք է տաղըթմիշ ընելուն հոգնիլ․ լաքին Թօնսիլլէ ըսված կլանտուլաներն են իւֆիւնէթլէնմիշ

եղածները նէ՝ չորս հինգ օր անցնելէն ետքը՝ տաղըլմիշ չէն ըլլար · իլլէ թէ որ հիւանդը քանի մը անգամ այս իլլէ ս քաշեր՝ և ետրա բացվեր՝ և բաներ է նէ : Պաշխա իւֆիւնէթներու պէս ակեց ալ տէֆա տէֆա և շատ արիւն առնել խիթիզայ չէ · Փախամթ քանի մը մասամէներ կան քի՝ անոնց պէտք կըլլայ · և թևէն արիւն առնելէն ետքը՝ պէտք է ուռեցած և ցաւցած տեղը սիւլիւկ փակցընել :

Հիները այս իլլէթիս առենը ռանինա ըռլած տամարները կըտրել կապըռապըրեն · լաքին առնք գըտնելը՝ և կըտրելը շատ սըխընթըլը բան են · վախթին կէօրէ թէհլիքէ ալ կունենան :

Ուրիշները ձիւկուլմաէ տամարէն արիւն առնել կապըռապըրեն · և ասիկայ սպաղի ծանր իլլէթներուն շուտով ֆայտա կընէ , լաքին արիւնը կայնեցընելու համար պօղազը փաթթել չըլլար · վըրան սալթ քիչ մի բամբակ , և անոր վըրայէն ղարըալըղ եախը մը զարնելու է քի՝ բամբակը նէշտէրին ծակին վըրան մնայ : Շըլլմիքին վըրան տասն և երկու սիւլիւկ ալ փակցունես նէ՝ ձիւկուլմաէ տամարէն արիւն առածի չափ ֆայտա կը տեսնես : Թէ որ իւֆիւնէթին և ցաւին պատճառը միտէյին և պաղըտախներուն մէջը ավլած և փըտտած նիւթեր ըլլալ երևի , թէհճիւալէ եղլած է քի՝ շատ ֆայտա կընեն փըսխեցընօղ դեղերը · և այն դեղերն ալ որ հեմ կը փըսխեցընեն հեմ լուծմունք կուտան :

Այն առենը թէ որ նապզը և պաշխա էթրաֆները արիւն առնելու խիթիզայ չի տան նէ՝ արիւն առնելը պարապ և ֆայտասըզ բան է : Թէ որ հիւանդին արիւնը աըլ թայֆաթէն կիւմրահ ըլլայ , էն առաջ արիւն առ , և ետքը՝ թէ որ աղէկ կը հակընաս քի՝ փըսխելնէն ետքն ալ արիւն չի գար դէպ ՚ի շըլլմիքին տամարները , առէն չանցուցած լքէն՝ փըսխեցընօղ դեղ մը տուր : Երբոր պօղազին իւֆիւնէթը նէվաղիլի պէս բան մը նէ , և հետը գըանկըռած հիւմման քէօսլին չէ , հիւանդէն արիւն

առնելը փայտածուխ բան է․ անոր ընելու փայտայէն աւելի փայտ կընէ ենքսէն բեհլիվան եախըսի փակցընելը, և (Թ․ 22․) Թարիֆ ըրած դեղըմէնիս կարկարա ընել․ և սառնցմէ զատ՝ կիւհերչիլէով շինված պէվմնտա սալին'նա, որուն մէջը սալթ մէկ ցորեն մը նալ Թառթառօ էմէթիքօ խառնէ, և քիչ քիչ կըտայով առ․ Միւրվերը և մեղրը եփ ջուրի մէջ ձըգէ, կենայ մինչվան որ ըլլաձախ ըլլայ․ այս ալ Թող խըմէ հիւանդը։ Պօղազին իւֆիւնէթին քէսկինութիւնը աւելի ըլլայ նէ՝ տէմ քի՝ աղի և ֆիթնէլէթմիշ ընօղ դեղերով դուն ալ խաթ մը տահա պօղազը մնձիթմիշ չընես․ պաղ ջուր ալ մի խըմցըներ։ Աղի և ֆիմնէլէթմիշ ընօղ և վէլվէլէ ըլվօղ դեղ գործ ածելը փէք միւթիղայ որ ըլլայ նէ՝ իհթիքանով գործ ածելը տահա մինասիպ է։

Թէեթև լուծմունք տըվօղ դեղերը այս հիւանդութեաս շատ փայտալը են։ Պօղազը չոր և կերկի ըլլայ նէ՝ փօմէ'նթի ընել պէտք է, էպէկիւմէձիի մըթպուխը և մեղրը մէկ ըզմէկ խառնելով, և՝մէջը բէք քիչ ալ կիւհերչիլէ ձըգելով։ Կամ կաթի մէջ ինձիր եփելով, և մէջի ինձիրները հանելէն ետքը՝ նոյն կաթը ըլլաձախ փօմէնթիի գործ ածելով։

Ջուրի մէջ քիչ մի քացախ խառնելով՝ եփած ատենը հիւանդը իր բերանը այն պուղուին վըրայ բռնէ նէ՝ պօղազին կերկիութիւնը կերթայ։

Լիզելու դեղ մի ալ կը շինենք (Թ․ 23․) Թերքիպով, և կուտանք հիւանդին որ լիզէ․ այս ալ պօղազին ցաւը կը քիչցընէ։ Այս լիզելու դեղիս նիւթն են զամի արապիի հալեցուցած ջուր, կամ մեղրի մէջ եփած այվայի կուտ, պօղազին մէջ չիրմնկայով դեղ Թափելը տայիմա Թէհլիքէլի է․ սալթ կընծա գործ ածել՝ երբ որ պօղազը փակըւտուկ և Թանձր պալղամով մը լեցվեր և ծեփվեր է և դուրս չելլեր․ այն ատեննու ալ շատ մեծ սախընմիշ ըլլալով ընել խիթիղայ է։ Հիւանդներուն առէթ ըրած Թարղըմը կարկարա ընելը ֆիթնէութիւնը կեվէլցընէ։

Լինիմէնթօ վօլաթիլէ ըսուած դեղը (Թ. 24.) մէկ չուխայի մը վրայ դնելով՝ չէնեէյին տակը դնես. կամ հացով և կաթով կակուղցընօղ լաբա մը եփես և վրան դնես՝ այն ալ փայտայ կընէ։

Թէ որ վերը գրուած պատճառներուն համար չի կրնաս չինանքէին ուռեցքը տաղըթմիշ ընելու, պէտք է ուռեցքը հասցընելու հոգնիլ, անկէց ետքը՝ որ թէզով բացուի, և թարախն ալ ալէկ թարզով մը բանեցընելով՝ եարան եալըմիշ չեղած՝ և շատկէկ անդ չի փըտտած լիքէն՝ անձն որ դուրս ելլայ.

Թարախը եփելուն և եարան հասունընալուն նը-շանն են ցաւոյն քիչնալը և նամզ զարկածի պէս զարնելը. և հիւանդին ուժը չի կոտրած լիքէն՝ հի-ւանդին մըսիլը. Պէտք անդամ կըրնանք եարան դէպ 'ի դըրսի թարաֆը բանալով՝ անանկ բանեցը-նել. լաքին ամէկայ բէք քիչ զուհը կընէ.

Պէտք անդամ եարան պիւթիւն պօղազին մէջը կըպատէ, և հիւանդին շատ նեղութիւն կուտայ, և խըղդըվելու թէհլիքէի մէջ կըձգէ. Այն ատենը պէտք է քի՝ վերը գրված քացախօտ ջուրին պուղուն շատկէկ գործ ածես. և դըրսէն կակըղցընօղ լաբա մի զարնես. Լաքին թէ որ խուֆիւնէթը քեսկին չէ, և շնչառութիւնը դժուար չէ նէ՝ արիւն առնելէն սախընմիշ ըլլալ պէտք է. Թէ որ կը նայիս քի՝ եա-րան հասունցած է՝ լաքին ուշ պիտի բացուի, պէտք է նէշդէրով բանալ. Եւ թէ որ հիւանդը խեղդըվե-լու թէհլիքէի մէջ է նէ՝ պրոնքօթօմիա ըսուած գոր-ծողութիւնը ընել պէտք է. Լարինճէա ըսուած չի-նանքէին՝ և խռչափողին խուֆիւնէթին դեղ ընելու բէք քիչ ատեն կունենայ հիւանդը՝ մեծ թէհլիքէի մէջ ըլլալուն համար. Այն ատենը թէ որ այս խը-ւէթիս հետը գըտնըված հիւանդին խուֆիւնէթլը ըլլալը իմանաս՝ շուտ մը արիւն առնել պէտք է՝ կամ ճիւկուլարէ ըսուած տամարէն, կամ ուրիշ տամար-ներուն մէկէն, մինչեւ կըլլայ նէ թող ըլլայ. կամ նոյն լարինճէ'ին վըրայէն համամաթ ընելով՝ շիշէ

փակցուր · կամ Թուղթէյին վըրան հաճամաթ ըրէ · կամ շատ առէն չանցընելով այս ըսած տեղերուս վըրայ տասն և երկու հատ սիւլիւկ փակցուր ։

Տղայոցմէն այնքան շատ արիւն առնըլլի նէ՝ խըրա-ելի որ չէն կրնար տըղայքը դիմանալ · առանցմէ արիւն առնելը և սիւլիւկ փակցընելը իրենց տարիքին նայտուըմիշ ընելով որ ըլլան՝ շատ ֆայտայ կըտեսնես ։ Պէ՛տք է նաև ոտքերը տաք ջուրը դընել · և հօգնա ընել · և արիւն առնելէն ետքը՝ լախնճէ՛ին և Թուղթէ՛ին վըրայ բէհլիւան եախըսի փակցընել ։

Հիւանդին պէ՛տք է նաև բերանը եփ ջուրի պուղույի վրան բռնել ։ Պա՛զլըներուն ալ տար տեղը ծիվա մեհլեմով լախնճէին վրաները կը շփեին, որ ներս չի կըրնար բանիլ ։

## Պ—ՕՃՕԼԻ՛— ԸՆԵԼԸ ։

*․ 129 ․ Ե՛րբոր լախնճէ՛ին վըրայ, կամ Թուղթէ՛ին առջևի դիերը քեսկին իւֆիւնէթ ըլլալուն համար հիւանդը խեղդըլվելու պէս ըլլայ, պէ՛տք է այն առէնը պռանքօթօմի՛ա ըսած գործողութիւը ընել, որ Փարազը չիւփհէլի դեղ մը նէ · լաքին այս մասլահաթիս առկեցալ մինասիպ դեղ չէս կըրնար գըտնել ։ Ըսկզբին և չէնեէյին կլանտուլաներուն ուռենալէն պատճառած չինանքէ՛ին՝ որ արտաքին չինանքէ ըսինք, և շատ անգամ զարարըղ մէկ հիւանդութիւն մը նէ, հիւմմայեին ուժին և նամըին քեսկինութեանը և սերթութէը՛ նայելով՝ մէկ երկու անգամ մը պէտք է արիւն առնել · և պա՛զի հեղ ալ հի՛չ պէտք չըլլար ։ Պէ՛տք ըլլալիքը չըլլալիքը համըը կըցըցընէ · ուռեցքին վըրան ալ լինիմէ՛նթօ վօլաթիլէով շփէ, և թէ որ ուռեցքը շատ կերկիութիւն ունի նէ՝ վըրան մէկ կակղըցընօղ լաբա մի ղա՛րկ ։ Ասլի՛նօ ըսած ծինաէն ալ լուծող դեղ մը տուր · և այս ծինաերուս մէջէն է քրըրըմ Թարթարը, առկէց ետքը տուր պէվե՛նտա սալի՛նա ըսածը, վինօ անթիմօնիա՛թօ՝ կամ Թառթառօ էմեթիքօ խառ-

նելով բէք քիչ. և կիւհէրչիլէով շինված ինֆուզի-օնէ մը սամպուքօ, և օսսիմիէլէ տուր,

Տեղին կեօրէ մինասիպ դեղեր գործածելով անիկայ տէֆ ընելու է, Եւ ասոր Թարզը. ամէն մէկ անդամքին և գործարանքին հիւանդութիւններուն վըրայ գրուած և գրուցուած խօսքերէս կըրնաս սորվիլ. Լեզուին տակի խօլաէ բուսած չաթալ ոսկորին տակէն խախտելէն պատճառուած ցինանքէն դեղ ընելը՝ այն ոսկորը իրեն տեղը դընելէն կըլլայ. և ասիկայ ճէրահի և խըրըխճիի միւսթաքիլ գործ է.

Երբոր այս ցինանքներուն ձինսին մէկուն հետը դարա հիւմմայ գըտնըվի, այս հիւմմային դէմ դընելու ույղուն դեղերուն մէջէն, և չարանշան իւ-ֆիւնէթի վըրայ գրածներէս պէտք է սորվիլ ասոր դեղը. ինչէ՝ սքառլաթթինայի վըրայ խօսած տեղեր-նիս սքառլաթթինա մալինեային համար ինչ դեղ թարիֆ ըրեր ենքնէ՝ այն դեղը ըրէ.

---

Զաթըլճէնպ, կամ զաթըրրիէ. տր. Բէրիբնէւմօնիա, կամ Բլէւրօբնէւմօնիա, յն. Բնէւմօնիա նօթհի, կամ կրծա-ցաւ, կամ կողացաւ. հայ.

Զաթըլճէնպին պատճառը և բժշկութիւնը.

*. 130. Կուրծքին մէջ գըտնըված ալէաթներուն իւֆիւնէթ շատ զուհր կընէ. և ասոնց մէջալ աւելի իւֆիւնէթ կըողը աքճիյէրն է,

Այս իւֆիւնէթներուն հետ շատ անգամ կողերուն ծայրը՝ կամ կուրծքին ուրիշ կողմերը քէսկին և զօրնօզ ցաւ կըլլայ. ասոր համար այս հիւանդութեանս խալայըք ասէն մը ատէթ իւզրէ բլէւրի-թիսէ կըսէին. լաքին այս հիւանդութիւններէս մեռնօղ հարիւրաւոր մարդոց փորը բացված ըլլալով՝ թէֆթիշ ընելու համար, հիչ մէկուն ալ թ բլէւրա ըսված կողերուն ոսկորներուն վըրայի մաշկը իւֆիւնէթ եղած չէ տեսնըված:

Ատոր նշանները։

*. 131. Իրաւ բեռլիրնեւմօնիա հիւանդութեն պաշլանկըճ ըրած ատենը զուհը ընող նշանները մէկ թիւրլիւ չեն ըլլար . և այս իլլէթս աւելի ձըմեռ ատենները և շատ տաք ամառուան սօն օրերը երեւան կելլէն։ Պա՛զի կըլլայ քի՝ մէկ քեսկին ցաւ մը փէյտահ կըլլայ կուրծքին վրայ . և հիւանդը հոգնածի պէս կըլլայ , և միտը կըխառնըվի , և փըռխելիքը կուգայ։ Պա՛զի քեսկին կամ թըյը մըսիլ մը կըմնայ . պա՛զի ալթ տաքութիւն մը կըլլայ . և ատկէց ետքը կուրծքը մէկ ծանրութիւն մը և ցաւ մը կը պաշլայէ . և ատկից պա՛զի կանուխ և պա՛զի ալ ուշ զուհը կընէ։

Լաքին շատ հէզ մըսելը անցնելէն ետքը՝ մէկ տիւզէյէ քեսկին տաքութիւն մը կըկոխէ հիւանդին վրան . և ատկէց մէկ սուր և զարնօղ ցաւ մը կը-պատահի կուրծքին մէկ կողմը՝ ոը տեղն որ ըլլայ նէ . լաքին շատ անգամ կուշտերը կըլլայ՝ ոչ շատ վեր , և ոչ այնքան ալ վար և այս ցաւըս պա՛զի ինչ-վան եախային ոսկորը և ինչվան քիւրէկները եայըլ-միշ կըլլայ։ Ատոնց հետ՝ կողերը բըռնող սթեռնօ ըսուած ոսկորներուն դիերնալ մէկ ծանրութիւն մը՝ և սըխմըլմիլ մը՝ և մէկ ցաւ մը կըմնայ։

Պա՛զի անգամ հիւանդին շունչը շատկէկ ներս քաշելը դժուար կուգայ . կըշտի վրայ չի կըրնար պառկիլ , հէլպէթ կըռնըքի վրայ պառկելու է , և կեօվտէն վեր և բարձր ըլլալու է։ Սօլուխը սըխ սըխ և չափուխ կառնէ , շատ կը հազայ , և քանի հազայ նէ՝ խահաթսըզ կըլլայ , պալղամը փակչոտուք և փրփրուոտ կըլլայ . շատին քիչ ատեն չանցնիր րէնկը կը փոխէ . կամ արիւնախառն կարմիր կելլէ , կամ դեղինի կամ կանաչի մէյլլի . և հիւանդութիւնը ծանր եղած ատենը հիչ պալղամ չի քակվիր , և հազցած ատենը հիւանդութեն նշանները կը քեսկին-նան։ Այս միջոցիս շատին նամըզը ամուր սերթ և ուժով և լեցուն կըլլայ , և սըխ սըխ կը զարնէ։

Պտղիներունը կակուղ և մէկ տուղէյէ կըլլայ· պտղիներունը մանր և կըծկըտած կը զարնէ· և ուրիշներունը աւըլ Թապլյէթձէ խարերէն չափուխ չըլլար, իլլէ՝ անկէց ծանր պինէ կըլլայ:

Ամէն դիւռ չափ տամարնէրը շատ ուժով կը զարնէն· և հիւանդը սրտաուաջք (բռնէքօնտիօ) բոլոծ տեղը երոցք մը կիմանայ տայխմա մէկ տուղէյէ:

Հիւանդութենէ նոր պաշլայած տանըներըը արիւն առնես նէ՝ ելած արիւնը առողջ մարդու արիւնի պէս կըլլայ· անկէց ետքը՝ մէկ մը տահա արիւն առածիդ պէս՝ քիչ ատենի մէջ արիւնին վըրայ Թանձր և գեղնագոյն և կըպչուն և եօղլու մէկ մար մը կըկապէ· որուն բժիշկները խաչերէն քօԹիքա բլէւռիԹիքա կըսեն: Շատին երեսը կարմիր և ուռեցվորած կըլլայ· պտղիները մօռարմիշ եղած կըլլայ· լաքին աւելի շատին երեսը դեղնած է և ղապունցած: Էքսերի այս հիւանդներուն երեսէն և չըլլինքէն և կուրծքէն փոկչըտուք քըրտինք մը կելլայ, որ հիւանդին հիչ մէկ ֆայտա մը չունի· մարմինին ուրիշ Թարաֆները լուած տեղերես ղատ՝ բէք տաք և չոր կըլլան· լեզուն շատ չոր կըլլայ, հիւանդը ծարաւութենէ կը լափի, և քեսկին հերարեԹով կայրի, և բան մը կըլլելու ատենը ռահաԹըլըղ կըլլայ:

Կըշտի պառկելու ըլլանէ՝ ցաւած տեղերնուն վըրայ կը պառկին· լաքին պտղինէրը մէկալ դին կը պառկին, այն դին չեն կըրնար պառկիլ· և ասոր պատճառը ինչվան հիմա տահա դիտցըված չէ:

Փորէն ելած միտաուԹիը կամ աղբը պտղինը շատ և ջուրի պէս կըլլայ· լաքին շատը պիւԹիւն պիւԹիւնէ խապղ կըլլան: Շէշը շատինը սապոնոտ ջուրի պէս կըլլայ· գիշերը քունէրնին չիտանիր, այրխըլամիշ կընեն· և խըլէԹնին շատ կը ծանրանայ: Հիւանդը պտղի սաֆրա կը փըրսխէ· և ասոր պատճառը ամէն հեղ հիւանդը ռահաԹըլըղ ընօղ սըխ սըխ հազալը չէ մինակ, շատ անգամ միտէին մէջ աւլած հիւԹ կենալու նշաննեըն ալ կերևին հի-

ւանդին վրայ. իւլէ՝ ծանր սաթլիճան որ ըլլայ.

Շատ անգամ այս միտէին նշանները փարաղը կերևին, լեզին միտէն հին մէկ քեռեր մը ունեցած չըլլար. որով սուտ կելլան այս նշանները. և պատճառը սալթ այնէ քի՝ միտէն աքծիյէրին հետ շատ ըլս ինհախութիւն ունի. Զանզի բժիշկներ աոկեց խաբըւելով՝ իրենց հիւանդին փըլխեցընօղ դեղ տըվեր, և վընաս հասցուցեր են. որոնք թէ որ արիւն առնէին նէ՝ հէմ այս միտէին նշանները անէֆ կըլլային, հէմ խաստը կը կըտըրըլէր, որ զանզի այս ձինս հիւանդներուն զուհր կըլնէ. շատ մանհաբեր բերիբընեւմօնիաներուն առենը տեսնըված է քի՝ փորուն մէջի գըտնըված տամարները, և իլլէ սև ձիյէրին տամարները արիւնով լեցած էին. անանկ քի՝ հիւանդը մեռնելէն ետքը սև ձիյէրին մը տեղին որ դանակ դըրպէր նէ՝ այն տեղէն շատ արիւն կելլէր.

Զանզի հեղ հիւանդին փորը շատ ուռեցած կըլլայ, և կը ցաւի. և հիւանդները սօլուխնին շատկէկ ներս քաշելու ըլլան նէ՝ քեսկին ցաւ մը կիմանան. որ սօլուխնին դուրս հանած առեննին կը թուլնայ. և այս ցաւըս կը ցըցընէ քի՝ փորուն տամարները լեցուն են. և աքձիյէրը տիաֆրամմային կըպած է.

Անանկ կըպած ըլլալով տիաֆրամման չի կընար ազատ փոքրափորին մէջը լինջնալ.

Այս ալ գիտնալ պէտք է քի՝ ամէն առեն իւֆիւնէթ եղած աքձիյէրին դին չի ցաւիր. զանզի հեղ իւֆիւնէթը սաղդին՝ և ցաւը սօլդին կըլլայ.

### Ասոր չէաքին նշանները.

* . 132 . Այս ամէն ըսածներէս՝ այս հիւանդութեան առենը հիւանդներուն կուրծքին դալաֆները փէյդահ եղած սըխընթըներուն պատճառը աչիքեար կիմացվի. ասոր համար է նաև այն պաշխաճայ պայղընութիւնը, և սըրտին շարժմունքին էվէլնալը, որ այս հիւանդութեանս կըլլայ. Այս ծանր հիւանդութեանս մէջ ուրիշ դէշ նշաններ ալ կերևին, որ

կը պատճառին արեան ճէվլանին խափանուելէն, և ուղեղին մէջ շատ արիւն երթալէն, և ոսկրներուն ախտաւութիւնէն՝ որ ուղեղին մէջի արեան շատութիւնէն առաջ կու գայ: Այս նշաններս են գլխու ծանր ցաւ մը, աչքին փառլախ կարմիր և ուռեցածի պէս ըլլալը, լեզուին թանձրանալը, հիւանդին ապրխլամիշ ընելը՝ կամ անանկ քընացածի պէս թմրած մնալը: Եւ այս ըսած նշաններըս քանի որ հիւանդութիւնը ծանրանայ նէ՝ օրէ օր մէյտան կելլան. կամ երբ որ կուրծքին մէկ տեղէն կըլլայ հիւանդութ̅ե հիւթը ուրիշ մէկ տեղ մը կերթայ նոյն կուրծքին մէջը. Ինչվան որ հիւանդութ̅ե եօթներորդ՝ կամ իններորդ՝ կամ տասն և մէկ երորդ օրը՝ որ հիւանդին բէք գէշ օրերն են: Եւ պճղի տաշա ուշալ, կուրծքէն մէկ խըռկալ մը կը փըրթի, պօղազը իւֆիւնէթլէնմիշ կըլլայ, ձայնը կը մարի. ձեռքերուն և ոտքերուն ծայրերը կը պաղին. Նամզը եախըշըխսըզ և սըրասըզ կըլլայ և արա տըվօզ և բէք մանր կը զարնէ, կը քըրտընի, և քանի որ քըրտընի նէ՝ ուժէ կիյնայ, և քըրտինքը փակչըտուք կըլլայ, և պաղ. և ասոնք ամէնը մէկէն՝ հիւանդին մեռնելու ատենը մօտենալուն նշաններն են: Այս ամէն ըսածները՝ բէք թէհլիքէլի բէրիփնէւմօնիաի նշաններ են: Լաքին պճղի հեղ թասլըքէթճէ քըթէն արիւն պօշանմիշ կըլլայ. կամ բժիշկը աղէկ վարպետութ̅ե գիտար ընելով՝ պալղամին հետը թարախի պէս հիւթերը դուրս կելլան. մէջերնին տամար տամար արիւն կը գըտնըվի, և հիւանդը խօլայ կը հանէ պալղամը. և ասոնցմով շնչարգելութիւնը և ցաւին քէսկինութիւնը տէֆ կըլլան. և հիւմմային ալ ուժը կը կըտրի: Շատ ալ բաստ կու գայ քի՝ հիւանդութ̅ե նիւթը պալղամ քակվելու հաճէթ չի մնացած իքէն՝ ուրիշ ճամբով մը կը քակվի. և այս ձինս հիւանդութեանս եօթներորդ օրէն ինչվան տասն և չորս երորդ օրերուն մէկը կը պաշլայէ հիւանդը պօլ և տաք և շօգխաւոր քըրտինք թափել. որ պիւթիւն

մարմնոյն վրան հաստատ կըլլայ · և այս միջոցին եղած չէռին փօձան թեթև և թարախի պէս բան մը կըլլայ։ Պաղի անգամ բէռիբնէւմօնիան՝ հիչ պալ- ղամ չի քակվելով սալթ չէռով կը քակվի · իլլէ՝ ռէւմաթիզմօէ պատճառվածը, և այս չէռը հիչ մէկ փօձայ մը չունենար, թէմիզ տուրղուն կըլլայ, լաքին շատ կըլլայ · ինչվան մէկ օրը տասն և երկու- լիպրէ, և տաւձ աւելի չէռ կեւլլայ։

Փարագա ինչվան հիմա ըսածներուս ամէնը՝ կամ շատը ամէն բէռիբնէւմօնիայի պիտի ըսաս գան, լաքին պաղիներուն ներսէն գաղտուկ մէկ իւֆի- նէթ մը տիրելով փորտուքներուն մէկուն վրայ՝ հիւանդը իր ողջութեան ատենը հիչ մէկ նշան մը սէզմիշ չըներ վրան · մեռնելէն ետքը երբոր թէֆ- թիշ ընելու համար մարմինը ճըղքէնք նէ՝ այն ատենը կը տեսնենք քի՝ իւֆինէթ եղած և թարախ կապած է։

Պաղի ալ կըլլայ քի՝ բէռիբնէւմօնիայի նշան- ները չէ թէ հիչ զուհր ըրած չեն ըլլար, իլլէ՝ բժիշկին տիքքաթ չընելուն համար՝ չի կրնար ֆար- խին երթալ · և անանկ անխնամ ձգելովը՝ մէկ իւ- ֆինէթ մը աքճիյէրին վրայ ղարարը թարախոտ եարա փէյտահ կըլլայ։

---

ԲԷՌԻԲՆԷՒՄՕՆԻԱ ՆՕԹԱ, ԷԱ"։ ԱՔ ՃԻՅԷՐ ՇԱՐԸՆ ԳԷԼԼԷ ԻՒՔԻՒՆԷԼԻ ՃԱ՛"։

*·133· Այս հիւանդութիւնս զուհր կընէ պալ- ղամոտ և գէր և ծեր և զայիֆ միզաջ և կակուղ և թոյլ մանրաթել ունեցող մարդոց։

Եւէքսէրի՝ ցուրտ և թաց հավա ունեցած տե- ղերը, և աշնան անձրևային օրերը կըլլայ։

Ասոր պատճառը մէկ վէլվէլէ տըվօղ բան մը, որ պռօնքները սարմիշ կընէ ու վէլվէլէ կուտայ և ֆիթնէլէթմիշ կընէ, և այս ֆիթնէութեանս պատ- ճառով քիչ ատենի մէջ շատկէկ պալղամ մը փէյտահ ըլլալով՝ պռօնքները կը լեցընէ, և թանձր և փակ- չուտ ըլլալուն համար՝ խօլայճա չի կրնալով դուրս

ելալ՝ հիւանդը խեղդըվելու թէհլիքէի մէջ կը ձըգէ։ Ասոր նշանները են, գլխուն քեսկին ցաւը՝ որ հազացած ատենը տաքն աւելի կը քեսկիննայ՝ գլուխը պըտըտիլը, հօգնիլը, շէալին պուլանըխութիւնը, և քիչ ատենվան մէջ հիւանդին դէշնալը։

Այն ատենը հիւանդին շատ տամարները ատէթձէէն չափուս և թէզ թէզ կը զարնեն. պաղի թապիյէթձէ նապզին զարնելուն պէս կըլլան՝ փէք քիչ ֆարգ ունենալով, պաղի սըրտասըղ և ույզունսուզ և զայիֆ կըլլան, սրտառաջքը (բալէքօռտիօն) ալ նեղութիւն մը կիմանայ, և կուրծքը կըսըխմըվի։

Ծարաւ փէք քիչ կունենայ հիւանդը, և քիչ մը բան խըմէ նէ՝ այն ալ կըփըսխէ. հազը պաղի քեսկին՝ և պաղի ալ քիչ և թոյլ կըլլայ. և ագձիյերին մէջը փակչըտուք պալղամ լեցված ըլլալով՝ հազէն ետքը խըժում և խըռալ մը կը պատճառէ։

Այս խաբէբայ հիւանդութիւնս ըռնըվօղներուն քօվը կեցող մարդիկը՝ հիւանդութեան թէհլիքէն չեն կը ընար ճանչնալ, և կամայ կամայ առաջ երթալուն համար՝ մարդ հօգ չընէր, լաքին մէկ մը քէսկինցածին պէս՝ առաջը չառնըվիր. զաթըլձէմայի նշանները ցըցընելով՝ հիւանդը կը մեռցընէ։ Լաքին աստանկ նշաններս ալ ամէն ատեն չերևնալով՝ հիչ մէկ մարդ մը մըմիւլ չըրած լքէն՝ հիւանդը կըմեռնի։ Առաջկուց ըսած ենք քի՝ միտէին մէջը մնացած և ավըրված հիւթերը շատ ատեն հիւննագ և ուրիշ ձինս խաֆիւնէթներ կը պատճառեն։ Ասոնք կուրծքի հիւանդութիններ ալ կըրնան պատճառել. բէռիբնէւմօնիայի ամէն նշաններէն զատ, քեսկին ցաւ ալ փէյտահ կընեն հիւանդին կուշտը, կամ կուրծքին մէկ ուրիշ սէմթը. և ասինկայ պաղի ատեն մէկ երկըրին հավային մախսուս և միւսթաքիլ իրեն թապիյէթ եղած բերմանքէն էբիտէմի քաալ կըլլայ. Լաքին այս բանիս թահմինին շատ կը սխալին բժիշկները. ղէրէ ինչ պէս որ առաջկուց ալ ըսինք, բէռիբնէւմօնիային հետ շատ անգամ սաֆրավի հիւմմայի նշաններ ալ կը դըտնըվին՝ որ միտէին մէջը

ալրած նիւթը շատնալէն չեն պատճառիր։

Լյարդին չիւնքի հաղին՝ և դժուարնէֆէս անե-լութին՝ և պսպղընութին՝ և կուշտի ցաւին պատճառը և հիւմմային՝ շատ ատեն փըտտած և ալրած նիւթերը կըրնան ըլլալ․ ուստի այս պատճառներս կուրծքի ուֆիւնէթ ալ կըրնան պատճառել։

Շատ երկիրներու մէջ ռուհը եղած է քի՝ մէկ ատեն մը շատի վրայ մէկէն ղաթըլճըմա ըլլալով՝ ամնուն վրայ ալ սաֆրայի հիւմմայի նշաններ կը տեսնըլին որոյայ , և ասոնցմէներէն քանի մը անգամ արիւն առնըլելով՝ սաֆրայի հիւմմայի ղուհուրաթները ծանրացած է․ և շատ զեան քաշած են , և մահուան թէհլիքէյի մէջ ինկած են․ և ասոնցմէներէն մէկ կամ երկու հեղ արիւն առնըլելէն ետքը՝ փըրխեցընող և քըշող դեղ տըլեր էնէ՝ անոնք ֆայտա տեսած են․ Պա՛զը ղաթըլճըմաներ անանկ հալերի մը ատեն կըլլան քի՝ մարդոց սաֆրան աղըըրմիշ կընեն , և շատին վրայ սաֆրայի հիւմմայի մախսուս եղած նշաններ կերեւին , և այն միջոցին շատ հիւանդներուն իրենք իրենցմէ սաֆրա փըրխելով կամ փորերնին քըշելով՝ թեթեւնալնին և հիւանդութենէ ա-զատիլընին ալ տեսնըլած է․ Կըրնանք չիւփհէսիզ իմ ըսել թէ՝ պա՛զը անգամ ղաթըլճըմը սաֆրա-յի հիւմմայի նշան և անկէց ռուհը ըլլալով՝ երկրոր-դական հիւանդութիւն է , և այս դասմանքս չնաղ ըլլալուն մեծ խապաթին մէկն ալ այն է քի՝ շատ հեղ ասանկ հիւանդներէն արիւն առնելով՝ շատ ծան-րացած է հիւանդը , և մեռած ալ կան ․

Պա՛զը անգամ ղաթըլճըմայի հետ դարա հիւմմա ալ կը խառնըլի , որով հիւանդութիւնը դէշի կերթայ , և ասոր պատճառը հէմ հիւանդին ինքը զինքը չի կըրնալ նայելէն կրնայ ըլլալ , հէմ պաշըըճայ պատ-ճառ մը հիւանդութեան վրայ թէյսիր ընելը կըլլայ , իլլէ՝ էրիւսիփէան և պուլաշըխութիւնը հիւանդութեան խըյաֆէթը շատ կը քէսկինցընէ և կը դէշցընէ ։

Եւ պա՛զը հեղ այնքան կը դեղնայ այս իլլէթս ,

և այնքան մահաբեր կըլլայ քի՝ ժամանակին դե-ղութեանը՝ մըթալըս և պատ պատրաստ կուգայ, և պօլի հեղ ալ ֆարաղը հալըլին բերմունքը և էրի-տեմիան այնքան քէսկին ըլլալու նշանները չունի • լաքին մէկզմէկէ պըլըշկելով, շատ մարդ կը մեռնին այս հիւանդութիւնէս ։ Այս գարա հիւմմայոտ զա-թիլճէմպը պաշլայածին պէս՝ մէկէն ՚ի մէկ հիւանդը ուժէ կիյնայ, երեսին գոյնը կը նետէ, և տրտում կըլլայ, կը թիթիզնայ, վախկոտ կըլլայ, գարա հիւմ-մային սթուփմտա և վէռասաթիլէ ըսված ձինսերուն նշանները կը պաշլայէն վըրան կերևան ։

Է՛ն առաջ տաքութիւնով խառն մէկ քէսկին պա-ղութիւն մը կը կուխէ վըրան, անկէց ետքը կը պաշ-լայէ շնչառութիւնը շատ զօռ քաշելով ընել, կուրծքը սըխմըվելու և նեղնալու պէս կուգայ իրեն, հազը սըխ սըխ և դժուար և չոր կըլլայ, և հիւանդը քանի որ հազանէ՝ քիչ մի պալղամ կը թըքնէ • այն ալ չիմուկի պէս սուլու, արիւնոտ կամ թարախով խառնըված ։ Նաբզը թայիլէթճէէն չափուխ կը զարնէ, կամ աւէթա չափուխ և մանր և եախըշըխ-սըզ և սըրասըզ կըլլայ, և շատ խօլայ կը փոխվի ։

Շունչ առնելը շատ դժուար ըլլալուն համար խիթիզայ կըլլայ տէօշէկին մէջ նստիլ • լաքին ուժ-չունենալուն համար՝ անանկ նստած իքէն՝ լիբօթօ-միա զուհր ընելով՝ քնացածի պէս թմրած և մէհման կը մընայ ։

## Ասոր գէշ նշանները ։

*. 134. Հիւանդը քէսկին գլխու ցաւ կը քա-շէ • իւլէ էնքսէին դին, և գլուխը պըտըտելն իքէն՝ խելքը կը կորսընցընէ • և պօլի հեղ աշէքեար կը խենթենայ կը կատղի ։ Շատ անգամ հիւմման չի կատղած իքէն, և պօլի ալ աժանսըզտան կուրծքին մէկ դին մէկ մըղըրախով զարկածի պէս ցաւ մը երևան կելլայ • որուն վըրայ ձեռք դըպցընելու ըլլաս նէ՝ ասլա չի կընար դիմանալ հիւանդը • և սէպէպ քի՝

հի՛չ տալը սօլուխ չի կրնար առնել․ այս նշաններուն հետը սաֆրայի պէս կամ չիքնի գունով հիւթ մը նալ կը փսխէ։ Այս միջոցիս հիւանդին քունը հի՛չ չի տանիր, կամ քնացածի պէս կը թմրի, լաքին չի քնանար․ լեզուն բէք չոր կըլլայ, և կը դողդողայ․ մուսքուլներուն ծայրի եղած մանրաթելերը կը թըրթըռան, կը հեծկըլտայ, չէռը կըլլայ՝ կամ պուլանըխ, կամ ջրային, կամ սեւագոյն՝ կամ արիւնով խառնած, կամ սապոն ջուրի պէս, և թէփոտ։

Քըրտինքը կըլլայ շատ և կըպչըտուք, մօռ մօռ և սեւի մօտ խարամուխներ կամ հասպաներ կը թափէ․ կամ կօրեկըտիկ (միլիարէ) դուրս կուտայ․ վերջապէս քըթէն արիւն կուգայ՝ և պաղըրսախներէն և ուրիշ տեղերէն ալ արիւն կուգայ, և ասոնք հիւանդին շատ թեհլիքէլի են։ Պաղի հեղ ցաւը անխախտ թէմելլի չըլլար․ կերևի թէ՝ հիւանդին հանգչելու ժամանակ կուտայ․ շնչառութիւնն ալ շատ դժուար չըլլար․ լաքին քեսկին ծարաւէ կը լափի և կոյրի ու կը տոչորի, և կը պապակի, և լիբօթիմիա կունենայ, եանիա՝ տալղըն կը մնայ թմրածի կամ քնացածի պէս․ բերնին մէջն ալ աֆթէ ըսված եարան ելլալով բերանը եարաներով կըլեցվի։

Ասանկ հիւանդներէն ելած արիւնը նօսր է, եանիա՝ սուլու և բէք ջրոտ, և հի՛չ փըխտիլէնմիշ չըլլար։ Լաքին պաղի հեղ ասոնց արիւնին վըրայ ալ մէկ թանձր և էօղլիւ և արիւնագոյն մար մը կը կապէ․ մեռնելը մօտենալուն նշաններն են խըռալը, ոտքերուն և ձեռքերուն պաղիլը, մուսքուլներուն և սինիրներուն թօթվըվիլը, և բէք մանր նամղ ունենալը։ Պաղիներուն ալ՝ թէ որ միտէին մէջը ակրած և փըտտած հիւթեր կան նէ, ասէթձէ մէկ փորքըըշուք մը հիւանդութիւնը կը թուլցընէ, կամ մարմինին վըրայ ֆայտալը եարաներ դուրս կուտան, կամ պըռկունքին էթրաֆը շատ եարաներ կելլան․ կամ կօրեկըտիկ դուրս կուտայ մարմինին վըրայ, և հիւանդը շատ և հոտած քըրտինք մը դուրս կը

թափէ, աստնք աղէկ նշան են։ Այս հիւանդութեան մեռնող մէկի մը մարմինը բանալով՝ վարպետ բժիշկ մը տեսաւ քի՝ աքճիյէրին ետևի դին ուռեցած և արիւնով լեցված էր․ լաքին աքճիյէրը ոչ ծանր էր և ոչ սէրթ․ ոչ ալ էթրաֆը շիճուկ կամ թանձրանալու աւիշ մը կար, ինչպէս որ սահիհ բէռիբընէւմօնիային ղուհր կըլնէ։

Այս բաժիններուս նայելով՝ աճայիպ բան մը նաւ այն է քի՝ բէռիբընէւմօնիանալ ըսըթմայի պէս սպաղի մարդոց նէօպէթով կուգայ․ և թէ որ արժանահաւատ և ճշմարտախօս մարդիկ ասիկայ տեսած չըլլային և չի հաստատէին նէ՝ հաւատալու բան չէր։

Եւ իրաւի որ ըսըթման ամէն հիւանդութեան մէջ կը խառնըվի․ և ասոր հետն ալ կըլնայ ըլլալ եղեր։ Լաքին շիւփհէ ընելու չէ քի՝ աստնկ նէօպէթլի սաթլըճանը շատ րասատ գալու՝ կամ ղուհր ընելու բան է․ անոր համար ով որ բէռիբընէւմօնիային բըռնած ատենը՝ տեսնալով քի՝ իրիկվըները կը քէսկիննայ և ցերեկին կը թեթևնայ, ասիկայ նէօպէթ ղանն ընէ, և նէօպէթը խափանելու համար քընա քընա տայի նէ՝ եանղըլըշ գործ կընէ։ Զէրէ երբոր մինասպէթսիզ տեղը այս դեղըս տըրվի նէ՝ հիւանդը գէշի րասդ կուգայ։ Լաքին վարպետ բժիշկները պաղի ծանր բէռիբընէւմօնիաներուն աղէկ տիքքաթ ընելով՝ տեսան քի՝ երկու օրը անգամ մը ըլլնօղ ըսըթմայի միւսաթաքիլութիւններ կերևի վըրան․ անոր համար քանի մի անգամ մէկալ ճինս բէռիբընէւմօնիաներէն ատէթ եղած չափէն քիչ արիւն առնելէն ետքը՝ քընա քընա տըվին, և աղէկ ֆայտա ըրին հիւանդներուն․ որ բժշկական պատմութիւններուն մէջ կը կարդանք․

Այս ճինսիս նոր պաշլայած ատենը դժուարաշնչութիւն և հազ մը կուգայ հիւանդին, և կուշտը կը ցաւի, և արիւնախառն պալղամ կը թըքնէ․ և նապզը լեցուն և սէրթ սուր հիւմմայ կունենայ․ Լաքին քիչ մի ատեն անցնելէն ետքը՝ կըլլայ։

կուրծքին և կռնակին նեղութիւն տալով նշանները քրքրտինքով մը տէֆ կըլլան. նամզին մըխ մըխ զարնելը կանցնի, լեզին նամզը լեցուն կը մնայ. և կաշխին կրակի պէս տաքութիւնը կը մարի.

Շատ անգամ չէռլին տակը խօրասանի պէս փօճայ մը կինջնայ. հիւանդը աշիքեար էֆ աղէկ րահաթութիւն կունենայ. լեզին առջի անգամ բըռնած տենը համածին պէս՝ սէպէ քի՝ նոյն սահաթին ափանըը ազմիշ կըլլայ հիւանդութիւնը, և այսալ թարիֆ ըրածիս պէս քրքրտինքով կը վերջանայ.

Պմալի անգամ ըշըթման թէռձանա տօբբիա ըսղած թարզով ըլլալովը՝ նէօպէթով գալըխայպ կըլլայ. տար ազմիշ եղած ժամանակները նշանները մէկըզմէկու հետ բուպար ընելով խօլայ կըրնաս ֆարխ ընել, որ թոյլ իքէն քէսկինցած կըլլայ, և թէ թուլութեան և թէ քէսկինութեան տերեձէները տըըլ բէռիբնէւմօնիային տռէթ եղած կանոնէն աւելի կըլլան. Եւ ասանկ մէկ բան մը զանն ըրած տանէնըդ բէռիբնէւմօնիային վըլայ՝ թէ որ այն օրերը ըշըթմա շատ կը գըտնըվի նէ, այն երկրին մէջը՝ բէռիբնէւմօնիային պարբերական ըլլալուն մէկ նշանն ալ այն է.

## Առջի դարմանները.

*. 135. Բէռիբնէւմօնիայի պատճառ կըրնան ըլլալ ուրիշ իւֆլինէթներուն ալէսէվիյէ պատճառներէն զատ՝ շնչառութեան աւեաթներուն դըպչօղ բաներն ալ. Ասոնց մէջ ամէնէն պաշըլըճան այն է քի՝ մէկ մարդուն մարմինը շատ տաքցած իքէն՝ պաղ հավայի դէմ կայնի, կամ երկան և հէրարէթլի խօսվածքներէն ետքը, կամ խաղ կանչելէն՝ կամ բերնով չալըվելու աւեաթներ կամ չալգըներ չալելէն՝ կամ աշխատելէն՝ կամ վազելէն ետքը, կամ ասանկ հոգնած իքէն՝ տօնտուրմա, կամ պուզլու շէրպէթ, կամ ջուր խըմելէն ետքը կըլլայ.

Ուստի բէռիբնէւմօնիային շատ գըտնըված տ-

տեններըը ըսէք ցուրտ էլամներինէն , և խարտաւել՝ և փօրեաղ փըշած օրերը · լօքին վերը գրված պատ-ճառներուն համար ամառվան տաք օրերն ալ կըրնայ ըլլալ: Մարմնոյն արտաշնչութիւնը կըտրըվելէն ալ ներսը խուֆլունէթ զուհր կընէ · և այս խուֆլու-նէթս ուրիշ գործարանքներէն աւելի աքճիյերին կըլլայ:

Առջը Գուշուհուրէնը:

*·136· Բնէւլընէւմօնիային թէհլիքէլին ծանր-ութիւնը ինչվան հիմա գրածներէս զատ , հիւան-դութեան առըլ տեղին նազիքութիւնէն ալ կըրնաս հասկընալ: Բըլէւրիթիսէ իլլէթը թէ որ սալթ կուրծքին մէջ գտնըված զարը կամ մուսքուլին խու-ֆլունէթլէնմիշ ըլլայ նէ՝ այնքան թէհլիքէլի չըլլար:

Աքճիյէրին երկու փերթը մէկէն քեակին խուֆլու-նէթլի բըռնըվելու որ ըլլայ՝ հիւանդը չի կըրնար մեռնելէն ազատիլ: Սահիհ բնէւլընէւմօնիային ա-տենը զուհր ըրած փոփոխութիւններուն թէ սըրան և թէ ատենը՝ սըրտը և չըրփըլը և ատէթօլէ · հիչ մէկ բան մը ափանըղ չըլլար · և այս միւսթաքիլու-թիւնս ուրիշ խուֆլունէթներուն հիչ մէկը չունի:

Հիւանդութեան վերջը աղէկ կամ գէշ գալուն շատ կըխառնըվի հետը եղած հիւմմային թապիյ-էթը · որքան որ շնչառութիւնը դժուար ըլլայ՝ և չափուեա՝ և կարճ կարճ շունչ առայ , և շունչ առնէն կքէն ալ ցաւ իմանայ , և երեսը ուռեցած և մօռար-միշ եղած՝ կամ դեղնած ըլլայ , և հազը չոր ըլլայ , և ելած պալղամը կանաչ ըլլայ , և շատ տաղըղն ըլ-լայ՝ կամ չըղըընութիւն ունենայ · և ճակատէն և շըլլինքէն և կուրծքէն ելած քըրտինքը շատ և փակ-չըտուք ըլլայ , և հիւանդը տեօշէկին մէջ րահաթ չի կըրնայ կենալ , սըխ սըխ մէկ դին մէկ ալ դին դառնալ ուզէ · և սըրտին շահ տամարները և աւըէ խիեն շարժմունքը սալընթը ունենայ , և հիւանդը ուժէ շատ ինկած ըլլայ · այնքան աւելի մեռնելու-

Թէհլիքէն կը շատնայ հիւանդին վրայ ։

Կուրծքէն մէյտան եղած խըժումը և խուպը մահուան մօտենալուն նշան է ։ Հիւանդին քէակին չեղած լիքէն՝ հիւանդին դժուար շունչ առնել տալը , և թևերին թմիլը և ուռենալը կը ցըցընէ քի՝ կուրծքին մէջ հիւթ կայ թաշմիշ եղած ։ և այս ալ մահաբեր է ։ Նամըն ալ՝ կամ շատ լեցուն և կակուղ կըլլայ , կամ սըխ սըխ և բարակ կը զարնէ , և ձեռքերը պաղած կըլլան ։ այս ղուհուրաթիս մէջը շատ անէմի բժիշկներ շատ հիւանդ մեռած չըլլալնուն համար՝ հիւանդին տէրոջը աչքի լոյս կուտան ։ լաքին քանի մի սահաթ անցնելէն ետքը՝ հիւանդը կը մեռնի ։

Շատ բէռիբնէւմօնիաներ պալղամ քակելով տէֆ կըլլան ։ լաքին շատ ալ տեսնըված են քի՝ շատ պալղամ չի քակած իքէն՝ կաղատին սալթ քրտինքով և փօլ շռռելով ։ և սանից չէռին տակը ձէրմակ և թարախի պէս փօձայ մը կինջնայ ։ շատին ալ սքձլյէրին կէրկինութիւնը անցնելէն ետքը՝ պալղամ գալ կը պաշլայէ ։ և այս պալղամները հիւանդին առողջանալուն փայտա մը չեն ըներ ։

Գէշ բէռիբնէւմօնիային վերջանալու օրերուն մօտիկ՝ պաղի հեղ եղանաթէմաներ և ուրիշ երուցք ամենցող եարաներ և էրլանձըլը դուրս կուտայ ։ և ասոնք պաղի հեղ հիւանդին աղատվելուն նշան են ։ Բէռիբնէւմօնիան քակօղ եարայ քիչ տեսնըված է ։ և պաղի հեղ ականջը կէլլայ ասանկ եարայ ։ պաղի ալ ականջը կը խուլնայ , որ գէշ նշան չէ ։

Այս հիւանդութիւնըս ըսըթմային փոխվիլն ալ քիչ ղուհր ըրած բան է ։ Կուրծքին շիշ խօթածի պէս ցաւը տեղը փոխէ՝ կըռնակը երթայ , կամ եարայլին ոսկորին թարաֆները ցաւին նէ՝ ։ փեք աղէկ նշան չէ ։ լաքին թէ որ ցաւը տեղը փոխելով ուժը կոտրի , և շընչառութիւնը սէրպէստ ըլլալ պաշլայէ նէ՝ աղէկ է ։ Իլլէթը թեթևնալէն ետքը՝ խուղխուլմիշ ըլլալով նորէն քէսկիննայ նէ՝ առաջին անգամէն աւելի թէհլիքէլի է , լաքին առջի

անգամինը բժշկելու ըրուած ճամբովը այսպէս կը բըժըշկըվի :

## Աքձիյէրէն և կուրծքէն մէջ եղած փեյտահ ըլլալուն նշանները :

* • 137 • Աքձիյերին և կուրծքին մէջ եղած փեյ-տահ ըլլալուն և բացվելուն պէտք եղածին չափ պէլլի նշանները ասոնք են : Վերը գրված նշաննե-րուն մէկ ունեցէ երթալը , խիփկվան դէմ հիւան-դին աղմիշ ըլլալը , նամզին առջինէն աւելի սըխ սըխ զարնելը , մռլիկը , երեսին կարմրութիւնը , ալուձին մէջ կրակի պէս տաք ըլլալը , սըխ սըխ և դժուար տօլուխ առնելը , աղքերուն վըրայ փեյտահ եղած պաղ ուռեցքը : Առաջվընները հիւանդը քըրտընածին պէս այս նշանները ամէնն ալ կը թուլնան , հիւանդին ալ փարաղը խշտահը տեղը կըլլայ , լաքին օր աւուր վըրայ կը զայտըննայ • տայխմա ծարաւութիւն կուննենայ , և առաջկուց ցաւցած տեղը մէկ ծանրութիւն մը կիմանայ , և կըշտի վըրայ պառկելու դժուարութիւն կը քաշէ , ոչ ցաւցած դիհուն վըրան կըրնայ պառկիլ՝ և ոչ մէկ ալ դիհուն վըրան : Այս ըսած նշաններուս ամէնը մէկ տեղ եղած ատենը՝ կըլնաս խըմա վըճռել քի՝ աքձիյերին ասըլ իրեն մէջը մածչի՛ա կամ սանիէ ըսված թա-րախին ձինաներուն մէկը ժողվըված է • կամ զարշա-հոտ լեքօռէ ըսված ջուրը փեյտահ եղած է • կամ մէկ խոց մը եղած է քի՝ խտալէրէն վօմիքա կըսվի :

Որ մեծ կամ , պըղտիկ կըլլայ • պօղի մէկ տեղ մը կըլլայ՝ պօղի մէկ ուրիշ տեղ մը • և պօղի աք-ձիյերին ներսերը կըլլայ , և պօղի ալ դուրսը , պօղի ըլէւրային մօտիկ : Այս վօմիքա ըսածնիս կանուխ կամ ուշ կը հասուննայ , իրեն լայնութեանը և մե-ծութենը կեօրէ , և զուհը ըրած ատենը գըտնըված հիւմմային քէօվկին կամ թոյլ տէրէձէին կեօրէ • և այս վօմիքային գըտնըված տեղին նայելով՝ ձինս ձինս նշաններ ալ երևան կելլեն , ասոր տակը ձնայած

տեղերուն ըխմըրլելէնն ալ հիւանդին ձինս ձինս նե-ղութիւններ կը պատճառին ։ Ու երբոր վօմիքան հատուննայ, կամ ինքնիրեն կըպատռի պուծնքիներուն թարաֆէն ․ և պուծնքիներուն ձեղերը առաջկուց գոցված , և եոքը եախըշըխսըղ պիչիմի մը մաած՝ կամ մաշելով պատռած ըլլալով այս թարախի պէս հիւթս թափ եղած տօպրակի պէս տեղին հեա ի-հախութիւն կունենայ ․ կամ սպճկէրին ծակոտ տեղերուն մէջ կը թափի , որ իւֆիւնէթը այն տեղ-ներուն այնքան գըրպած և ղեան տըլած չէր ․ կամ կուրծքին մէջի փոսը կուգայ , որ պօղի հեղ պի-թիւն պիւթիւնէ պարատ կըլլայ ․ և պօղի հեղ ծակոտնոր հոսըլ եղած մխոզ մը կըլէցնի , որ հիւանդութեան ատենը փէյտահ կըլլայ ։

Կամ իւֆիւնէթին ատենը սպճկէրին հեա կըպ-չօղ տեղերը կերթայ այս թարախըս ․ կամ ասըլ պուծնքիներուն մէջ մըտնելով ըսած տեղերուս ամէնուն մէջնալ ճամբայ կը գըտնէ կը քալէ ։

Թէ որ թարախը պուծնքիին մէջ մըտնէ նէ՝ քիչ եղած ատենը՝ հազալով խօլայճա դուրս կելլէ ։

Լաքին պօղի ալ շատ կըլլայ՝ թռնքեային մէջ չի սըղմիր ․ և այն վախտը երևան կելլան պայղընութի , գլխու պտոյտ , տաղըընութիւն , և խեղդըվելու թէհլիքէ , խեղդող նէվպաղի , և եոքը եոքը հիւան-դը կը խեղդըվի կը մեռնի ։

## Թարախին բօշ ըլլալը ։

* ․ 138 ․ Սպճկէրին և բըլէւրային մէջ տեղը եղած փոսին մէջը պօղի հեղ թարախ կը ժողվըվի , և պօղի հեղ այն տեղը չալխանթը մը փէյտահ կընէ ․ պօղի ալ այս չալխանթըն սպճկէրին ու բըլէւրային նեըքին մասած կերիլմիշ եղած մըսին վըրան կըլլայ ․ և այս չալխանթըյով պէլլի եղած թարախ ժողվը-վելուն՝ հոսմի բառով խուլացիք ալ էմբիէմա կըսեն ․ որ բիօն բառէն ելած ըլլալով մէջը թարախ կե-նալ ըսել է ։ Ի՛ն առաջ՝ սէպէ թէ՝ նորէն մէկ

ուֆիւնէթ մը կըլլայ․ հիւանդը մէկ բանի մը պատ-
ռիլը կիմանայ կուրծքը, որ է վօմիքային պատռիլը․
այս պատռելուն պէս՝ շնչառութիւն ալ կը խօլայնայ։

Հազը քիչ մի ատեն րահաթլանմիշ ըլլալէն ետքը՝
նորէն աւելիշ կըլլայ․ առողջ դիուն վըրայ պառկե-
լով դժուար կըլլայ շնչառութիւնը․ և մէկ դիէն
մէկալ դին դառնալու ատենը՝ կուրծքին մէջի չալ-
խանմըն կիմանայ։ Ձեռքով կուրծքին զարնելու
ատենը՝ կուրծքէն ելած ձայնը փոխված կըլլայ․
կըռնակին մուսքօլներուն, կամ քուստումթօ ալէլ
լօմպօ ըլլած մուսքօլին վըրայ եաւէմա ըլլած ձինսէ-
էն ուռեցք մը փէյտահ կըլլայ․ և բարակ հիւմմայի
նշաններ կը պաշլայեն երևիլ վէրէմլիներուն վըրայ
երևցածներուն պէս։ Աքճիյէրին վըրայ փէյտահ ե-
ղած վօմիքան պառղի հէլ բըլէուային հետ կը փակչի․
լաքին ասանկ ըլքէն ալ կենէ վօմիքայէն ելած թա-
րախը աքճիյէրին մէջ չերթար, կուրծքին մէջը
կուգայ։

Թօրաքս Բօտ ըլլալուն գուշակութիւնը։

*․139․ Այս ամէն բանծներըս՝ որ եարա կը-
բացվի, և թարախ փէյտահ կըլլայ ըսինք, հիւան-
դութեան խըյաֆէթը կը փոխեն, վէրէմին թիզէ
բօլմօնաւէ ըլլած ձինսին կը դարձընեն, որ խաս-
պիւփիղ է։ Աքճիյէրին վօմիքան պառծնքներուն դին
բացված ըլլայ նէ՝ ույղուն մէկ թարզով մը դիմար
ընելով կըրնայ բժշկըվիլ․ կամ հիչ որ չէ նէ՝ շատին
աքճիյէրը երկան ատեն վընասէ ազատ կը պահէ․
զէրէ եարային ներսի դին նասըրը կապած կըլլայ։

Լաքին շատ անգամ ալ վօմիքան փիս եարայի կը
փոխվի, և անկեց զուհր կընէ վէրը գըված վէրէմը․
ինչպէս որ աքճիյէրին թուպէռքօլօններուն թարա-
խոտելէն և բանելէն ալ վէրէմ կըլլայ։

Անոր ճէմարը։

*․140․ Ուֆիւնէթները բժշկելու համար որ-
ված ալէտէվիյէ խըրաններէս՝ նիզամ, որ այս հիւան-

ի 20

դութեանս ատենը պէտք է շուտով գործի դնել, զէրէ թէհլիքէլի է · ասոնցմէ ՚ի զատ աքճիյէրին վերայ պաշխամայ թէյսիր ունեցող դեղերն ալ գործ ածել պէտք է ։ Ասոր համար երբոր աքճիյէրը սահիհ իւֆիւնէթ ունին նէ՝ պէտք է նէշտէրով լայնկէկ ծակ մը բանալ, և շատ արիւն վազցընել անկէց · և քիչ մի ատեն անցնելէն ետքը՝ նորէն թէքրարլամիշ ընելու է այս գործողութիւնս՝ շատ անգամ · քանի որ տեսնաս քի՝ առջի անգամին արիւն առնելուդ ըրած շահին ետքը եկաւ դադարեցաւ, մէկ մը տահա արիւն առ ։ Ո՛ր թևէն արիւն առնես նէ՝ մէկ է · ֆախաթ նայէ՛ քի՝ արիւնը ուժով դուրս ցաթկէ, և շատ վազէ · լաքին պայղընութիւն բերելու չափ չըլլայ ։ Ոտքէն արիւն առնելը՝ ձեռքէն առնելու չափ շահ չըներ · պէտք է քի՝ արիւն առնելը և առած արիւնիդ շատութիւնը հիւանդութենը ուժին ույտուրմիշ ընես · էբիտէմիային թապիյէթին և հալիյին կէլիշաթին ալ նայիս · պաշլայած ատենին ալ տիքքաթ ընես , հիւանդին ալ կազմուածքը և խառնուածքը և տարիքը , և երիկ մարդ՝ և կընիկ մարդ ըլլալը տիքքաթ ընես · ասոնցմէ զատ՝ արիւն առնելէդ ի՞նչ գործ զուհր կընէ և առաջ կուգայ նէ՝ անոր ալ նայիլ պէտք է ։ Իլլէթին նոր պաշլայած ատենը՝ քիչ արիւն առնելով՝ շատ անգամ հիւանդին մեծ շահ կըլլայ · լաքին թէ որ աքճիյէրին իւֆիւնէթը շատ է նէ՝ սերպէսթ եղիր՝ մի՛ վախնար, տամարը լայնկէկ բա՛ց, չէ՛ նէ՝ հիւանդը կը մեռցընես · կամ իւֆիւնէթը շուտով մը ետքը փէյտահ կընէ, որ մեռնելէն քիչ գէշ չէ՛ · զէրէ այս ալ կը մեռցընէ, ինչպէս որ վերը ըսինք ։

Նապզին մի՛ նայիր այս հիւանդութեանս , սալթ հիւանդին շնչառութեանը՝ դժուար ըլլալուն՝ և հեվալուն՝ և նեղութեանը՝ և ցաւին պէ՛տք է որ նայիս · և ասոնք եվելցածին պէս՝ նապզը լեցունութի̄ չունենայ պիլէ նէ՝ արիւն առնես ։ Այս իլլէթիս գընացքին ու վարըշին ատենը թէքրար թէքրար ար-

իւն առնել պէ՛տք է շատ հիւանդներէն ։ Թէ՛ և նամզը մանր և կըծկըտած ըլլայ , և երեսը դեղնած , և ձեռքը և ոտքը պաղածի պէս ըլլայ . և երևի Թէ՝ հիւանդը շատ ինկած է ուժէ ։ Լաքին քանի՛ որ դըժուարաշինչութիւնը կըկենայ , ցաւը կըտրած պիլէ ըլլայ նէ՝ արիւն առնելէն ետ մի՛ կայնիր ։

Ասանկ հասկըցի՛ր նաև արիւն առնելու լէքէն հիւանդին մարելուն համար , որ այս մարելէքըս կը պատահի վախէն , կամ հիւանդին մէկ պաշխաճայ կազմութեանը խըխթիզայէն , և արիւնը կըտրելով Թէհլիքէ կըլլայ . լաքին պայղընութիւնէն հի՛չ մէկ զեան մը չի գար ։ Շատ մարդկան՝ որ նըստած լէքէն արիւն առնես նէ՝ շուտ մը պայըլմիշ կըլլան . պառկեցընես նէ՝ անանկ արիւն առնես նէ՝ շատ արիւն ելլալու կըդիմանան , հի՛չ մէկ պայղընութիւն մը չեն խմանար ։ Ելած արիւնին Թարզը պա՛զի անգամ հիւանդութեան Թապիյէթը աղէկ կը ճանչցընէ . լաքին արիւնին րէնկը՝ և Թանձրութիւնը՝ և վըրայի կապած մարը ի՛նչպէս կըլլան նէ՝ ըլլան , վերը գրված նշանները տեսածի պէս՝ արիւն առնելէն ետ մի՛ կայնիր ։ Շատ անգամ տեսած ենք քի՝ այս ճինս հիւանդներէն առջի անգամին առնըված արիւնը պաղելով՝ չէր Թանձրանար , ի՛նչպէս որ ալէսէվլյէ ամէն ուֆիւնէթներէն առնըված արիւնը կըԹանձրանայ . պա՛զին իքինճի անգամին արիւնն ալ անանկ կերԹայ , միայն իւչիւնճիւ և տէօրտիւնճիւ անգամ առնըված արիւնը կը պաշլայէն Թանձրանալ , և վըրանին Թանձր և մաշկաձև մար կապել ։ Անոր համար արիւնին Թարզին ալ նայելու չէ՛ արիւն առնելու ատենըդ , շատ անգամ կը նայիս քի՝ քանի՛ որ արիւն առնես նէ՝ հիւմման ու ցաւը քինելուն տեղը՝ կը շատնան , Թէ որ քանի՛ շատնան նէ՝ դու ալ արիւն առնելը Թէքրարլամիշ ընելու ըլլաս . եոքը եոքը ուզածըդ կը գըտնես ։ Շատ կըլլայ քի՝ հիւանդին նամզը լեցուն և սէրթ իքէն՝ եախըըշըխըըղ և միջոց տալով կը նեղէ ,

այս լինքն՝ քանի մի հեղ չափուխ , և ետքը կամաց , և տրատտա պմղի անգամ ալ պխութիւն պխութիւնէ կըտրըվելէն ետքը՝ նորէն կըպաշարայ նետել . Երբոր դուն ուրիշ նշաններուն նայելով՝ այս նշանին հոգ չընես՝ և արիւն առնես նէ՝ այս ալ կանցնի ։

Իւֆիւնէթի նշաններուն հետ զուհր ըրած խօսալէն ալ մի՛վախնար . խլէ այս ձինս փորքըշուքը դադրեցընելու համար ալ մէկ հատիկ դեղը արիւն առնելն է ։ Այսպէս հասկըցի՛ր նաև երբոր հիւանդը սաֆրա փըսխէ , և միաէն սըխմըլածի պէս բան մը խմանայ . լաքին այս բաներըս ամէնն ալ խրաւ բէռխընէւմօնի՛ային համար են ։

Կուրծքին իւֆիւնէթն ալ թէ որ ծանր և քէօկին ըլլայ , հիւանդը կին ըլլայ նէ՝ հայիզին ատէնը պէլէ ըլլայ , կամ լօհուսա ալ ըլլայ , և լօքի՛ի լուած հիւթը վազելու ատենին բասադայ , կէնէ արիւն առնելու է . ծոցվոր կընիկներուն շատին ալ առանկ ըրած ենք , և տըղան անցընելու վախ մը նալ չեկայ . զէրէ շատին ալ տըղան մնացած է ։ Այս հիւանդութեան մէջ քռիթի՛քա ըսուած օրերը համրել չուզեր . հիւանդութեան տասն և մէկինճի օրը , և տահա ուշ ալ հիւանդէն արիւն առած ունինք . լաքին նայէ քի՝ քռի՛զիի նշաններ երևան ելած չըլլան . զէրէ այն ատենը չես կըրնար արիւն առնել ։

Ես շատ հիւանդներէն առանկ արիւն առնելով՝ բժշկած ունինք , որ ուրիշ բժիշկներ նայելով՝ և հին կերպին վըրայ երթալով՝ ուշացած ըլլալուն համար՝ զանն ըրած էին քի՝ եարա բացված է աքձիյէրին մէջ , և հիւանդը մեռնելու մօտեցած է . և այս զաննովըս յուսահատած էին ։

Առանկներէն արիւն առնելով՝ շատը աղէկցան , առանց կուրծքին վընաս մը դըպցընելու . լաքին ետքը ետքը այս շատ արիւն առնելէն ալ սախընմիշ ըլլալ մը պէտք է , չըլլայ քի՝ ուժէ շատ իյնայ . զէրէ քռիզիին ատենը հիւանդին ուժ պէտք է ։

Եարաբացվելուն ալ առաջքը չի կըրնալ առնելը-

իմացածնիդ պէս՝ արիւն առնելը փայտասը՛զ է ․ և եարան աղէկ թարղոլ բանալու՝ և բժշկվելու համար հիւանդին ուժ պէտք է ։ Ուժը շատ կորսընցընելէն՝ կըլլայ քի՝ հիւանդը թէհլիքէլի ջոգողութեան մէջ ալ կիյնայ ․ լաքին այս ալ գիտցած ըլլաս քի՝ այս ջոգողութենս պատճառը աւելի՛ արիւն առնելուն քիչութիւնն է՝ քան թէ շատութիւնը ։

Մանր տղայքը չափահաս մարդոց չափ արիւն առնելու չեն կրնար դիմանալ ․ լաքին երբոր հիւանդութիւնը ծանր է նէ՝ ատնցմէ ալ պէտք է արիւն հանել , կամ երակ բանալով , կամ սիւլիւկ փակցընելով ․ փախաթ հանած արիւնըդ իրենց տարիքին կէօրէ մըթապըլս ըլլայ ։ Ծերերուն ալ այս խըլէթս զուհըր ընէ նէ՝ արիւն առնելու է ։

Վկայութիւն ։

*․ 141 ․ Գրուանք բժիշկը կըսէ քի՝ ինն անգամ արիւն առնելով՝ մէկ ծեր մը ազատեցի բեռիբընէ՛ւմօնիային թէհլիքէէն , որ ութսուն տարին անցած էր ։

Սուտ է այն քի՝ պազի բժիշկներ կըսեն թէ՝ արիւն շատ առնըլը այս ճինս հիւանդէն նէ՝ պալղամ քակելուն քէտէր կուտայ , և կըխափանէ ․ իլլէ՝ ինչպէս առաջ ալ ըսինք , այս զուհուրաթիս կամ պարագայիս մէջը՝ արիւն առնելէն աղէկ պալղամ քակօղ դեղ չի կըրնար ըլլալ ։ Կուրծքին անօթներուն մէջ թափ եղած և թանձրացած աւիշը՝ խուֆիւնէթը մարելով՝ աւելի՛ թեզ կը քակվի , քան թէ անթիմօնով կամ ատա սօղանիով թէրքիպ եղած դեղերուն վէլվէլէ տըվօղ ուժովը ։

Բեռիբընէ՛ւմօնիան երբոր սօն կամ եօքի տէրէճէն հասնի՝ և հիւանդը մեռնելու մօտ ըլլայ նէ , իրաւ է՛ որ ոչ արիւն առնելը անոր շահ կընէ՝ և ոչ ուրիշ դեղեր ․ և բըժըշկական զէնահաթը այս պարագայիս մէկ փայտալը և ուժով դեղ չունենալը՝ ամէն պաշըլըճա բժիշկներուն հետ մէնք ալ կըխոստովանինք ։ Լաքին շատ ալ կըլլայ քի՝ ճէսարէթը

բժիշկներուն բաղդը կըսանի՝ թէ որ խնկքով ու տավրանմիշ ըլլան · ինչպէս որ պծղի հիւանդին ոտքերը ձեռքերը պաղած լքէն ու՝ և նաբզը մանր մանր նետելն լքէն ու՝ հիւանդէն արիւն առնըված է · որ թէ այս չըլլար նէ՝ պիտի խըղդըվէր հիւանդը, և այս մարդուն կեանքը՝ սէպէ՛ք ի՝ պիւթիւն պիւթիւնէ նէշտէրին ծայրը կապված էր։ Լաքին այս ըսածներըս տեսնելով և կարդալով մի՛ զանն ըներ թէ այս ձինս հիւանդներուս բժշկութիւնը սալթ արիւն առնելով կը լըմըննայ · ուրիշ դեղեր ալ կան , որ ուրիշ իւֆիւնէթներուն և իւֆիւնէթլի հիւմմաներուն դէմ ֆայտալը ըլլալով՝ գովելի՛ են։

Ասոնց սըրայէն կամ կարգին մէջէն դուրս հանէ պաղ խըմէլիքը, և ցուրտ հավան · որ բէռիբընէւմօնիային հի՛չ չէն ույմիշ ըլլար։ Տէքօ՛թթօ անթիֆլօձիսթի՛քօ ըսվածը (· Թ· · 25 ·) այս զարարը և դէշ հիւանդութեանս հէմ դեղ է , հէմ ծարաւութիւնը անցընելով՝ ջուրի տեղ ալ կանցնի։

Քլիսթէ՛ռէ էմօլլիէ՛նթէ (· Թ· · 26 ·) և քլիսթէ՛ռէ անթիֆլօձիսթի՛քօ (· Թ· · 27 ·) ըսված թէրքիպներն ալ պէտք է հօգնայի տեղ բանեցընել։

Նոյնպէս (Թիւ · 48 ·) որ այս հիւանդութեանս աղէկ ույմիշ կըլլայ։ Ասոնցմէ քիչ խուվէթլի չէն նա՛ և զամխ արապիի մուչիլաձի՛նէն, և սալէպը։

Փորքըշուքը թէ որ սաֆրավի չըլլայ , և արիւն առնելով ալ կը կըտրի նէ , զամխ արապիի սիւպլյէով (Թ· · 15 ·) պծղի անդամ ալ աֆիօնով կըտրել կը նայինք։ Հիւանդութեան նոր պաշլըյած ատենը՝ կակուղցընող ֆօմէ՛նթիները և լինիմէ՛նթօ վօլաթի՛լէն շատ ֆայտա կընեն, կուրծքին ցաւոյն չարէդուրս քէսկինութիւնը զապթ ընելով · և իւֆիւնէթին ուժը կոտրելէն ետքն ալ՝ ցաւցած տեղին վըրայ բէհլիվան եախըսի դընես · լաքին չի բանեցընես , ցաւը կառնէ · իլլէ՝ թէ որ բէռիբընէւմօնիային պատճառը ռէւմաթի՛զմօ իլլէթը եղած ըլլայ։

Ալէսէլյէ պայաղի բէռիբընէւմօնի՛աներուն՝

բէհլիվան եախըսին հիւանդին կուրծքին օրթա տեղն ալ կըրնայ դրուիլ։ Շունչը ներս քաշելու ատենները՝ պաղ պաղ քացախով խառնած ջուրի պուղուին վրայ բերանը բռնէ հիւանդը, և այն պուղուն կըլլէ նէ, խուֆիւնէթ ունեցող աքձիկերին մէջ մըտնելով՝ ատոնք սըմըմօ զուհր ըլլալ չեն թօ-ղուր։ Պռօնքին մէջ գըտնըւած փակչըտուկ պալ-ղամն ալ այս պուղուս կը քակէ, որ հազացած ատենը խօլայ մը դուրս կելլայ։ Թէ որ հիւանդը շատ զայիֆնայ՝ և ուժը կամ խուվէթը պակսի, ան ատենը պէտք է ձեռք զարնել քեաֆիրինին՝ և ալքալի վօ-լաթի՛լէին. և ակքօթթօ ալ՛ բօլիկա՛լա սէնէ՛կային (Թ. 28.) և սօլուձիօնէ կօմմօզային (Թ. 29.) և բէհլիվան եախըսիներուն։ Բէռիբնէւմօնի՛ան խուզիւըմիշ ըլլալով նորէն ետ դարձած ատենը՝ վերը գըրւած դեղերը ամէնն ալ նորէն պաշըլայէ. ուրիշ ճամբայ բըռնել չուզեր։ Քոլ՛ղի զուհր ըրած ատենը՝ աւելորդ և ըլլէթլի հիւթերը՝ թայլէթը մի թարաֆէն դուրս կընետէ նէ, բժիշկն ալ անոր այն թարաֆէն դուրս հանելուն եարտըմ ընելու է։

Էմբիէմայի դէրդը։

*.142. Էմբիէ՛մայի նշաններ տեսնես նէ՝ բա-ռաչէ՛նթէսի՝ ըսւած գործողութիւնը թէձլիւպէ ըրէ. սթէ՛ռնօյին քովերէն ծակ բանալու ըլլաս նէ՝ այն տեղերը գըտնըւած պիւթիւն թարախը այն ծակէն կըրնաս խօլայ դուրս հանել։

Աքձիկերին և ուրիշ ներսի ալէաթներուն կամ պաղըրսախներուն վրայ զուհր ըրած եարաներն ալ աղէկ թարզով մը բանեցընելը կըրնայ ըլլալ. լաքին դժուար է, և վարպետ բժիշկի մուխթաճ է. անոր համար այս տեղըս ասիկայ զանց կընենք։

Եւ չիւնքի ասոր սէպէպը ատէթ խուզրէ մէտէին և պաղըրսախներուն մէջ եղած ֆէսատութիւնն է. անոր համար մէտէի հիւմմային (ֆէպպրէ կասթռի՛-քային) ինչ դեղեր գործածել ատէթ է նէ՝ ասոր

ու այն դեղերը ըլլալու է ։ Պէտք եղածին կէօրէ փոխեցընօղ և լուծմունք տըւօղ դեղերը գործածելը, և որովհետև այս դեղերուն մաղէյնը ուխօլէնթէ դեղեր տալը՝ աքճիյէրը այս հիւանդութիւնէս ազատելուն մէկ հասիկ ճամբան է ։

